

լԱ): Աւելի խիստ է Պարտաւայ ժողովին սահմանը, որով այլակրօններէ գերեալը եթէ քաղցէն ստիպուած եւ կամ բռնադատուելով՝ ուսեն «յանսուրբ եւ ի պիղծ մտոյ», թէեւ ազոր մէջ որ եւ մեղք չունին, սակայն եւ այնպէս ի դարձին տարի մը պիտի ապաշխարեն «արտասուօք՝ պահօք եւ աղօթիւք արտաքոյ եկեղեցւոյ» (Պրտ. ԻԳ): Տարապայման պատիժ, որ չի հաշտուիր մեր Հայրերէն պղծութեան տըրուած իմաստուն բացատրութեան հետ (աստ, 453):

Ալաւկայ որդին փոքր ինչ կը վերածէ այդ սահմանը: Մկնապիղծ աղով ապականուած կերակրոց համար կը կանոնէ՝ որ եթէ յանգէտս կերած է զայն քահանայն, ընտանեօք հանդերձ երեսուն օր Ս. Խորհրդէն հեռի պիտի մնայ. իսկ աշխարհականը պիտի ապաշխարեն հինգ օր, օրուան մէջ հարիւր ծունր կրկնելով: Բայց եթէ հաւատացեալը գիտութեամբ կերաւ, քառասուն օր պիտի պահք բռնէ՝ օրական հարիւր ծնրադրութեամբ: Եւ եթէ աղախին մը տիկնոջը երկիւղէն գործէ այդ պղծութիւնը, քսան օր պիտի պահք պահէ (Գ): Պարձեալ խօսելով ուրիշ պղծեալ կերակրոց եւ ըմպելեաց մասին, անոցմէ անգիտութեամբ ճաշակող քահանային կը